ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- հուլիսի 2022 թվականի №---Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի №397Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասը, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, (այսուհետ՝ Կարգ), այդ թվում՝ Կարգի 78-րդ, 81.2 կետերը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 7-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության 2022 թվականի հունիսի 2-ի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության 2022 թվականի մայիսի 30-ի №ԳՍ/22.2/13452-2022, հունիսի 30-ի №ԳՍ/22.2/17026-2022 գրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության, «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերության և «Ֆոտովատիո Ռենյուաբլ Վենչրս» Էս. Էլ.-«Էֆէսէլ Սոլար» Էս. Էլ.-ի միջև կնքված Հայաստանում՝ Գեղարքունիքի մարզի Մեծ Մասրիկի համայնքում, «Մասրիկ-1» արևային ֆոտովոլտային (ՖՎ) էլեկտրակայանի նախագծման, ֆինանսավորման, կառուցման, սեփականության իրավունքով տիրապետման և շահագործման մասին փոփոխված և վերաշարադրված՝ կառավարության աջակցության համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին լրացուցիչ համաձայնագրին հավանություն տալու մասին» որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Տասնչորս ամսով երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 14-ի «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №397Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0623 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0623 լիցենզիա) ամրագրված «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը՝ ճշգրտելով նաև արտադրության ժամանակահատվածը, Որոշման մեջ՝

1) «մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը» բառերը փոխարինելով «մինչև 2023 թվականի սեպտեմբերի 1-ը» բառերով, իսկ «մինչև 2040 թվականի հոկտեմբերի 16-ը» բառերը՝ «մինչև 2041 թվականի դեկտեմբերի 16-ը» բառերով.
2) 2-րդ կետով հաստատված հավելվածի №1 հավելվածի 4-րդ կետում «կազմակերպված մրցույթի արդյունքում ձևավորված՝ Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինն է, որը հավասար է 0.0419 ԱՄՆ դոլար/կՎտժ» բառերը փոխարինել «պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում ձևավորված՝ Լիցենզավորված անձի կողմից առաքվող էլեկտրական էներգիայի բազիսային սակագինն է, որը հավասար է 0.0415 ԱՄՆ դոլար/կՎտժ» բառերով:

2. «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ԼԷ №0623 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Մասրիկ-1» արևային էլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝

1) մեկամսյա ժամկետում «Բիբլոս Բանկ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի սեպտեմբերի 17-ի №1214 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված և 2020 թվականի նոյեմբերի 30-ի №1549 գրությամբ գործողության ժամկետը երկարաձգված ԲԲԱ05/2018 երաշխիքի համաձայն երաշխավորված 137 500 000 (հարյուր երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարից 68 750 000 (վաթսունութ միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) դրամը 900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել 137 500 000 (հարյուր երեսունյոթ միլիոն հինգ հարյուր հազար) դրամ գումարի երաշխիք՝ առնվազն մինչև 2023 թվականի հոկտեմբերի 16-ը գործողության ժամկետով:

3. «ԷՖԱրՎի Մասրիկ» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ՝ պարտավոր է «Էներգետիկայի մասին» օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի «ա1» և «ա2» կետերի համաձայն՝ արտադրության լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացված փաստաթղթերի (այդ թվում՝ դրանցով ամրագրված իրավունքների) փոփոխության դեպքում նախապես, այդ մասին իրեն հայտնի չլինելու դեպքում տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում, իսկ արտադրության լիցենզիա ստանալու, այդ թվում՝ արտադրության (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար անհրաժեշտ իրավունքն օրենսդրությամբ սահմանված կարգով դադարելու դեպքում (այդ թվում՝ իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու դեպքում) այդ մասին տեղեկանալուց հետո՝ 15-օրյա ժամկետում տեղեկացնել հանձնաժողովին՝ ներկայացնելով փոփոխության հիմնավորումները և փոփոխված փաստաթղթերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան, և դրա բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
5. Սույն որոշումը սահմանված ժամկետում կամովին չկատարվելու դեպքում ենթակա է հարկադիր կատարման՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հուլիսի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- հունիսի 2022թ.